

Հեղինակների մասին

Հայկ Դեմոյան, պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի քարտուղար: Տասներեք մենագրությունների և բազմաթիվ հոդվածների հեղինակ է: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության պատմություն, Ղարաբաղյան հիմնահարց, Թուրքիայի քաղաքականությունը հետխորհրդային տարածքում:

Նարինե Հակոբյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Անդրկովկասի հայության ցեղասպանության ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտական աշխատող: Զբաղվում է 1894-1896 թթ. արևմտահայության կոտորածների առանձին ասպեկտների ուսումնասիրությամբ:

Արփինե Բաբումյան, պատմական գիտությունների թեկնածու, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն: Զբաղվում է Արևմտյան Հայաստանի հայ բնակչության ժողովրդագրության հարցերով XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին:

Վալերի Թունյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Աշխատությունները վերաբերում են Ռուսաստանի քաղաքականությանը Հայաստանում և Անդրկովկասում, Հայկական հարցին, Հայ եկեղեցու քաղաքական պատմությանը:

Նարինե Մարգարյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Անդրկովկասի հայության և ցեղասպանության ուսումնասիրությունների բաժնի վարիչ: Զբաղվում է Հայոց ցեղասպանության արձագանքը արաբական երկրներում թեմայի ուսումնասիրությամբ: Մեկ մենագրության հեղինակ է:

Գևորգ Վարդանյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի քարտուղար: Զբաղվում է Հայոց ցեղասպանության հարակից զոհերի կոտորածների պատմության, ցեղասպանության ժխտման և Թուրքիայի արտաքին քաղաքականության հարցերի ուսումնասիրությամբ: Շուրջ երկու տասնյակ գիտական հրատարակումների, այդ թվում նաև մեկ մենագրության հեղինակ է:

Ռեգինա Գալուսթյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ՀՅԹԻ գրադարանի պատասխանատու: Ուսումնասիրության թեման է «Թուրքական ինքնության ձևավորումը և Հայոց ցեղասպանությունը»:

Ռոբերտ Թաթոյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Հայոց ցեղասպանության զոհերի փաստագրման և տվյալների հավաքագրման բաժնի վարիչ: Զբաղվում է արևմտահայության ժողովրդագրական հարցերի ուսումնասիրությամբ:

Սուրեն Մանուկյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն: 2012-2013 թթ. Ֆուլբրայթ հետազոտական ծրագրի կրթաթոշակատու: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության սոցիալ-հոգեբանական ասպեկտը և համեմատական ցեղասպանագիտություն:

Քրիստինե Նաչարյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կրթական ծրագրերի բաժնի վարիչ: Զբաղվում է Հայոց ցեղասպանության թեմայի իրազեկման խնդիրների, ինչպես նաև արևմտահայ կրթական կյանքի ուսումնասիրությամբ:

Ծուշան Խաչատրյան, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի հեռակա ասպիրանտ, ՀՏԹԻ հուշագրությունների և վավերագրերի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտական աշխատող: Պատրաստում է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայոց ցեղասպանության հետազոտման կրոնագիտական խնդիրները» թեմայով: Ուսումնասիրություններ՝ Օսմանյան կայսրության կրոնական իրավիճակի, կրոնների բախման, ցեղասպանության աստվածաբանության, թեոդիցեայի, Հոլոքոստի փիլիսոփայության ոլորտներում:

Էդիպա Գզոյան, պատմական գիտությունների թեկնածու, իրավունքի մագիստրանտ, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ավագ գիտաշխատող: Զբաղվում է Հայոց ցեղասպանության իրավական խնդիրներով: Մեկ մենագրության հեղինակ է:

Նարեկ Պողոսյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտ: Գիտական հետաքրքրությունների մեջ է մտնում Հայոց ցեղասպանության հիմնախնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի գիտական ժառանգության մեջ:

Սեդա Պարսամյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի համեմատական ցեղասպանագիտության բաժնի վարիչ: Զբաղվում է մշակութային ցեղասպանության, Թուրքիայում հայկական մշակութային ժառանգության ոչնչացման հիմնախնդիրների ուսումնասիրությամբ: